3 հունիսի 2010 թվականի N 674 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1038-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 011100 տողի 2-րդ սյունակում «Միջուկային ֆիզիկա» բառերը փոխարինել «Միջուկային ռեակտորների ֆիզիկա» բառերով.

2) 010800 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | |
|---|---|---|---|
| 010800 | Մեխանիկա | 62<br>62.1<br>68 | Մեխանիկայի բակալավր<br>Մանկավարժության բակալավր, ուսուցիչ<br>Մեխանիկայի մագիստրոս |

3) 030100 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ

| | | | |
|---|---|---|---|
| 030100 | Փիլիսոփայություն | 62<br>62.1<br>68 | Փիլիսոփայության բակալավր<br>Մանկավարժության բակալավր, ուսուցիչ<br>Փիլիսոփայության մագիստրոս |

4) 030300 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | |
|---|---|---|---|
| 030300 | Հոգեբանություն | 62<br>62.1<br>68 | Հոգեբանության բակալավր<br>Մանկավարժության բակալավր, ուսուցիչ<br>Հոգեբանության մագիստրոս |

5) 031200 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | |
|---|---|---|---|
| 031200 | Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն | 62<br><br>68 | Լեզվաբանության և հաղորդակցման բակալավր<br>Լեզվաբանության և հաղորդակցման մագիստրոս |

6) 032400 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 032500 տողով.

| | | | |
|---|---|---|---|
| 032500 | Սփյուռքագիտություն | 68 | Սփյուռքագիտության մագիստրոս |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հունիսի
Երևան